ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտխորհրդի՝
06.12.2024թ. հարցման կարգով կայացած նիստի թիվ 6 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ

Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտությամբ հեռակա ուսուցմամբ 4-րդ տարվա ասպիրանտ **Նելլի Էդուարդի Սարգսյանի** ատեստավորման հարցը:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Նելլի Էդուարդի Սարգսյանի** ատեստավորման հարցը (Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն, թեմա՝ «Փոխաբերության ստեղծման և թարգմանության ճանաչողական հայեցակերպը. ինտեգրացված մոտեցում», գիտական ղեկավար՝ բ. գ. դ., պրոֆեսոր Ս. Ք. Գասպարյան)»:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ներկայացվեց ատենախոսության թեման, կառուցվածքը, առարկան, աշխատանքի նպատակը, հետազոտության խնդիրները, տեսական և գործնական նշանակությունը, մեթոդաբանությունը: Նշվեց, որ Նելլի Սարգսյանը տպագրել է երեք գիտական հոդված, ևս երեքը պատրաստ է հրատարակության: Ատենախոսության առաջին մասը նվիրված է փոխաբերության՝ որպես լեզվական-իմաստաբանական տիրույթում բնութագրվող հասկացության, ինչպես նաև ճանաչողական լեզվաբանության շրջանակում դրա նկարագրական դիտարկումներին: Ներկայացված են փոխաբերության վերաբերյալ գիտական տեսությունները, որոնց հիման վրա իրականացվել է համեմատական ուսումնասիրություն: Ատենախոսության շրջանակում քննվելու է փոխաբերության հասկացութային բնույթի նշանակությունը թարգմանաբանության մեջ:
Ինչ վերաբերում է կրթական բաղադրիչին, Նելլի Սարգսյանը մասնակցել է մի շարք դասընթացների:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով վերոնշյալը՝ ատեստավորել անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Նելլի Էդուարդի Սարգսյանին**: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

06.12.2024թ.